

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆԻԻԹԵՐ

ԵԶՆԻԿԻ „ԵՂՆ ԱՂԱՆԴՈՑ“ ԵՐԿԻ ՄԷՋ

Մ. ԽՈՍԻՍԻԿԵԱՆ

Հայոց գրականութեան ոսկեդարի, Ե. դարի պայծառ աստղերիցն է Եզնիկ Կողբացին: Նրա գրքոյկը՝ «Եղծ աղանդոց» իրաւամբ բարձր է գնահատուած դասական ընտիր լեզուի ու ոճի և իմաստասիրական բովանդակութեան տեսակէտից:

Սակայն ազգագրական տեսակէտից էլ Եզնիկի այս գրքոյկը շատ գնահատելի է, որովհետեւ բաւական ազգագրական նիւթ է պարունակում իւր մէջ, յատկապէս 68—110 և 149—180 երեսներում^{*)}: Եզնիկի այս նիւթերը մասամբ օգտագործել են՝ Մ. Աբեղեան իւր «Der Armenische Volksglaube» գերմաներէն ղիսերտացիայի մէջ (Էրատ. 1899 թ.), և Հ. Ղ. Ալիշանը իւր «Հին հաւատք հայոց» աշխատութեան մէջ (Վենետիկ 1895): Բայց որովհետեւ վերոյիշեալ հեղինակները և ուրիշ նման նիւթերն ուսումնասիրողները մասամբ միայն օգտագործել են Եզնիկի այդ տեղեկութիւնները, և որովհետեւ այդ նիւթերը թէ Եզնիկի մէջ և թէ նրան ուսումնասիրողների գրութեանցում ցրուած են, մի տեղ չեն ամփոփուած, այդ պատճառով անհետքերէր չէր լինի հաւաքել և որոշ դասաւորութեամբ տալ «Ազգագրական հանդէսի» ընթերցողներին:

Յայտնի է, որ Եզնիկն այս գրքոյկը գրելիս՝ նպատակ է ունեցել Հայաստանում գոյութիւն ունեցող կամ հայերի վրայ որոշ ազդեցութիւն գործող հեթանոսական կրօնները, աղանդաւոր ուղղութիւններ ու հին ժողովրդական հաւատալիքները հերքել, ջրել:

^{*)} Զեւորի սակ ունիք Վենետիկի հրատարակութեւն՝ Եզնիկ. Եղծ Աղանդոց. Վենետիկ. Ի ՌՄՀԵ:

որպէսզի Հայաստանում արմատանայ պաշտօնական եկեղեցական դաւանանքը և կրօնական ճշմարտութիւնները: Այս պատճառով էլ բնականաբար իւր գրքոյկի մէջ պիտի բերէր ի միջի այլոց նաև եկեղեցու կողմից խոտելի համարուած ժողովրդական հաւատալիքներ, աւելորդապաշտութիւններ կամ անտիապաշտութիւններ և այլատէր դրանց հերքել, եղծել. դրա համար էլ Եզնիկի գրքոյկի մէջ ազգագրական նիւթերից առաջին տեղը պիտի բռնէին հաւատալիքները:

Դժբաղդաբար Եզնիկն առանձին գլուխ չի նուիրել հայ ժողովրդական հաւատալիքներին. եթէ այդպէս վարուած լինէր, այն ժամանակ մենք կուենայինք համեմատաբար աւելի ճշիւ նիւթ այդ երևոյթի մասին: Ինչպէս յայտնի է, նա իւր երկը բաժանել է չորս գլխի. Եզ Վրանդոց հեթանոսաց, Եզ Փէշին պարից, Եզ կրօնից Յունաց իմաստնոց և Եզ Վրանդոց Մարկիոնի: Այս վերնագրերից երևում է, որ հայ ժողովրդական հաւատալիքներն ինքնուրոյն տեղ չեն յանում. դրանք ցրիւ են տըրուած Ա. և Բ. մասերում 68—110 և 149—180: Այստեղ թող թոյլ տրուի մեզ ասել, որ Եզնիկի գրքի ամենաարժեքաւոր մասերն էլ հէնց դրանք են, որովհետև անկասկած ինքնուրոյն են. այնինչ ֆեոդալները՝ մանաւանդ Ա. գլխի մի աչքի ընկնող մասը, որը վերաբերում է հեթանոսաց կրօնների հերքման, հիւղէի վարդապետութեանը, ինչպէս և Մարկիոնի ազանդին՝ Դ. գլխում, մեծ մասամբ թարգմանութիւն են կամ քաղուածք Մեթոդիոս և Եպիփան եկեղեցական Զատագով հայրերի գրուածքներից, ինչպէս շատ գեղեցիկ կերպով ցոյց է տուել Հ. Քալեմբարեանը. Հանդէս Ամսօբեա, 1893. էջ 289—293. 345—351. 359—66 և 1894 թ. էջ 6—1. 87—90. 271—78. 1896 թ. 270—273:

Եզնիկի ընթերցողը «Եզ Վրանդոց հեթանոսաց» վերնագիրը կրող գլխի մէջ կարող էր իրաւամբ ենթադրել, որ հեղինակն այստեղ պիտի խօսի հեթանոսական զանազան կրօնների մասին, որի մ'ջ փոքր տեղ չպիտի բռնէր նաև հայ հեթանոսական կրօնը, քանի որ այդ գիրքը մի հայ էր գրում և հայերի համար էր գրում: Բայց դժբախտաբար հեղինակն հետեւելով իւր աղբիւրներին՝ զբաղւում է այն հարցով, որ ապացուցանի, թէ «Հիւլէն, նիւթս իբրև երկրորդ արարչական սկզբունք գոյութիւն ունենալ չէր կարող: Հիւլէի գոյութիւնը յոյն հեթանոսներն ընդունում էին, որպէս զի մի կերպ բացատրեն տիեզերքի մէջ եղած անկատարութիւնն ու չարիքը. իսկ թ'նչպէս էին բացատրում հեթանոս հայերն այդ հարցը, յայտնի չէ: Առհասարակ զարմանալի է, թէ ինչու Եզնիկը հայ հեթանոսական կրօնի մասին

տխնչ չի խօսում: ՄԲԹԷ V դարում հայ հեթանոսական պաշտօնական կրօնը Հայաստանում բոլորովին կորսուել էր, անազգեցիկ էս դարձել: Նա բաւականաճում է միայն մի երկու տեղ այն համոզումը յայտնել թէ՛ հեթանոսական բազմաստուածութիւնը արդիւնք է սաստանայի, ղեկրի խաբէութեանը: Այսպէս էլ 150 դրում է և... Դէք, ոչ երբէք զմարդիկ ի կոապաշտութիւն յօժարեցուցանէին և ոչ ի պէս պէս ազանդս զիրիսօփայից և հերձուածողաց և ոչ ի բախա բախտից և ոչ հակառադրաց և ոչ կապելոց հրամանաց... Ս. զի ղևաց զիւտ է կոապաշտութիւնն՝ վկայէ Դաւիթ...: Ս. որովհետև այսպէս է մտածում, այդ պատճառով պէտք է ընդունել, որ սաստանայի կամ ղեկրի հաւատը մեծ դեր է խաղում Եզնիկի աշխարհայեացքի մէջ:

Ա. Սատանան, ղեկեր, վիշապներ.— Ո՞րտեղից է վերցրել Եզնիկը Սատանայի գոյութեան հաւատը. տնչուշտ ամենից առաջ ո. Դրբից. բայց նա անխուսափելիօրէն պէտք է ազդուէր նաև հայ ժողովրդական հաւատալիքների տուեալներէր՝ սաստանայի կամ ղեկրի մասին: Այս տեղից առաջ է գալիս զփուարութիւն որչափու Եզնիկի մէջ, թէ ժրն է գուտ բիրլիական, ժրը ընդհանուր հեթանոսական և ժրը հայ ժողովրդական: Սակայն ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ բիրլիական սատանան ինքը արդիւնք է հին քաղդէական, ասոր-բաբելական և մանաւանդ զբաղաշտական կրօնների ազգեցութեան, որը խոր արմատներ էր ձգել նաև Հայաստանում, կը գտնը այն եզրականութեան, որ Եզնիկի սատանան նոյնքան հայ ժողովրդական է, որքան բիրլիական, թէպէտ տարբեր, առանձնայատուկ գծեր էլ պէտք է լինին երկուսի մէջ:

Սատանան ըմբռնուած է Եզնիկի մէջ իբրև Աստուծոց ստեղծուած, բայց նրանից ապստամբած մի էակ. դա բիրլիական հասկացողութիւն է: Հայկական հաւատալիքի մէջ սատանան պարսկականի նման ճանաչուած է իբրև Աստուծոց անկախ և նրա գէտ մշտապէս կռիւ մղող չարութեան սկզբունք: Սատանայ բառը, ինչպէս Եզնիկն իրաւամբ նկատում է, սեմական խօսք է. դա չարութեան հաւաքական անունն է. հայ ժողովրդական հաւատալիքի մէջ չարութեան ոգիները ղեկր են անուանուում: Եզնիկի կարծիքով ղեկրն անմարմին են, բնութեամբ նման հրեշտակների և մարդկանց ոգիների. հայ ժողովուրդը նրանց հողմնողէն, հրեղէն է համարում, ինչպէս էլ 91-ից տեսնում ենք ՎՅի եթէ ի բնութենէ հողմոյ և ի հրոյ էին...: Եզնիկը պարտք է համարում հրքել նոյն տեղում ժողովրդի այս կարծիքը, յայտնելով որ զրանք շնչի պէս թնթել և հողմի պէս արագ լինելու համար

են այդպէս անուանուած, որովհետեւ եթէ հոգմեղէն և հրեղէն լինէին այն ժամանակ մարմնաւոր կը լինէին, այն ինչ հրեշտակները, դեւեր և մարդկանց ոգիներն անմարմին են և բնութեամբ պարզ: Ասի և դե ոգի, այլ ոգի չար վասն անհնազանդութեան և ապստամբութեանն այլ գիտեմք, եթէ այս հոգմ է և հոգմն՝ ոգի... և վասն տարածութեան և արագութեան կոչին հրեշտակք և դեւք և ոգիք մարդկան ոգեղէնք, որ է հոգմեղէնք: (Էջ 91—92).

Այս թեթիւ արագաթուիչ ոգիները համապատասխան այն անդին, ուր նրանք բնակուած են կամ յայտնուած մարդկանց, զորան յարմար անուններ են կրում: Այսպէս Եփեսոսի գեւաց է կերպարանս ցուցանել և մարդիկ ըստ կերպարանաց անուանու դնեն, որպէս յորժամ քաղաքք և գիւղք աւերեսցին, և անդ դեք ծնանիցեն և կեղծա կեղծա յայտնեսցին, և մարդկան ըստ կեղծեսց նոցա անուանս եղեալ զոմն՝ յուշկապարիկ, զոմն պարիկ, զոմն համբարու կոյիցենք (Էջ 97—98). Այսպէս գետերի մէջ բնակուողները նշաննք են կուչուած, դաշտերին՝ շահաւետք, ինչպէս երևում է հետեւեալ սոգիւրից. Եփեսոսցուցանել, թէ և Նահապէ ինչ իցեն գետոց և շահապետք վայրաց. և յեւ դարձուցանել՝ ինքն (սասանան) կերպարանի կամ ի վիշապի կերպարանս, կամ ի Նահապի իմն և ի շահապետի...: Աւերակներու բնակուող գետերը յուշկապարիկ են անուանում, անտառներին՝ պարիկ կամ պայ, որը մի մարդուց է առաջացել, գետերին կամ ծովափերին՝ համբարու, ծովերին՝ իշացու կամ ծովացու, որը կովից է առաջացել, ժայռերին՝ (?) անլէզ, որը շնից է առաջացել և որը պատերազմում քաջաբար ընկած հերոսին վէրքերը լիզելով առողջացնում է: Եւ իբրեւ զծովացուին, զոր ի կովէ ելեալ տան, և զպայն իմն ի մարդկանէ և զառաւելզն՝ ի շանէ. և այն ոչ եթէ անձինք ինչ են, այլ անուանք զբռնգտանաց և բաշաղանք մոլորելոց մտաց ի գիւաց...: Ոչ երբեք ի մարդկանէ ելեալ պայն՝ եթէ առ երես արարած իցէ, և ոչ ի կովուց զծովացուին ելեալ՝ եթէ ի ծովակս բնակիցէ. և ոչ ի շանէ ինչ լեալ, եթէ ընդ աներևոյթ զօրութիւնս ինչ կեցցէ, և յորժամ վերաւոր ոք անկեալ ի պատերազմի գնիցի թէ լիզիցէ և ողջացուցանիցէ, զոր արաւելզն կոչեն. այլ ամենայն՝ առասպելք են և պառաւանց զրգլիւնք, և մանաւանդ թէ ի գիւաց մոլորութիւնէ: (Էջ 98—99).

Այս հատուածից երևում է, որ հայ ժողովուրդը հաւատում էր, թէ Հայաստանի լեռները, ձորերը, գետերն ու ծովակները, անտառներն ու աւերակները գետերով, ոգիներով բնակուած են: Նրանք ի բնէ ոչ չար են, ոչ բարի, այլ քեանահոյ, հապիտ ոգի-

ներ են: Առլէզներն պատերազմում ընկած հերոսներին են առողջացնում, այն ինչ նշանգը երբեմն կնոջ կերպարանք ընդունելով երբեմն ծովահորթ դառնալով: լողորդին նախ զէպի ինքն է գրաւում, ապա բռնում ռաներից, քաշում ծովի խորքը և խեղդում: Էջի կթէ էր ինչ նշանգ անձնաւոր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երևէր, և երբեմն փոկ լինէր և լողորդաց ընդ ոտս անկեալ հեղձուցանէր: (էջ 106):

Եզնիկն ի հարկէ վերոյիշեալ անձնաւորեալ առանձին, ինքն ուրոյն ոգիներէ կոյութեանը չի հաւատում: Բայց սասանայի և դևերի գոյութիւնն ընդունում է և կարծում է, որ դևերը անմարմին են և անսերմ, ոչ մեռնել, նուազել և ոչ ծնուել, շատանալ կարող են: Այլ հրեշտակք և դէք ոչ յաւելուած ծննդեամբ առնուն և ոչ պակասութիւն մահուամբ, այլ որպէս հաստատեցան, նոյնպէս և նոյժին թւով կան առանց յաւելուածոյ և նուազութեան: (էջ 102): Բայց այն հանգամանքից, որ Եզնիկը բանակում է ուղտւոյ հաստատել իւր սասածը, պէտք է եզրակացնել, որ ժողովուրդը ընդունում էր, որ նրանք, դևերը մարմնաւոր են: Կարող են ոչնչանալ և պակասել, կամ ծնուել և շատանալ: Կարող են ուղած ժամանակ իրենց տեսանելի մարմնեղէն բնութիւնը դարձնել անտեսանելի, կամ տարբեր ձևեր, գէմքեր, ընդունել, ուղած կերպարանքով հանդէս դալ: Ե՛ւ ոչ այլ ինչ արարած զոյ, որ կարիցէ ի կերպարանս կերպարանս լինել, որպէս զվիշապաց և զնհանգացն համբա են, այլ միայն հրեշտակք և դևք, որք կարող են զօգս գնդել և պաղել և ազգի ազգի կերպարանս երեւեցուցանել: Այլ և վիշապի կեղծս ի կեղծս լինեն...» (էջ 102 և 106): Նրանք կարող են ծնուել, շատանալ, մարդկանց և անասունների հետ սեռական յարաբերութեան մէջ մտնել և նոր նոր ճիւղացներ, ոգիներ առաջ բերել: Այսպէս Եզնիկը լսել է, որ գիւղացիքն ասել են և պնդել Այլ և վիճեալ ևս պնդեն ի բռնիցն վերայ, թէ ի մերում գիւղ ծովացու զկով պործեաց, և զգոշիւն հանապաղ մեք լսեմք ամենեցեան: Եւ միւսն ասէ. զպայն իսկ իմ աչօք տեսեալ է» (էջ 99): Այսպէս հակառակ Եզնիկի, ժողովուրդը դևերին աւելի մարմնեղէն է մտածում, որոնք յարաբերութեան միջոցով կարող են աճել, Իսկ նրանց ոչնչացնել կարող են միայն առանձին ուժով օժտուած մարդիկ՝ կախարհները, որոնք իրենք մի տեսակ դիւանար մոլեգնած մարդիկ են լինում, դևերի լեզուն հասկանալ, նրանց թոյլ կողմը ըմբռնել կարող են: Նրանք կարող են դևերին իրենց հնազանդեցնել, ուր ուղենան՝ ուղարկել, ուժ մէջ ուղենան՝ մոցնել կամ ուժից ուղենալ՝ դուրս հանել և կախարդական զօրութեամբ կապել, ոչնչացնել (էջ 85, 86):

Դեհերի առանձին տեսակը վիշապներն են. իսկ Եզնիկի կարծիքով նոյն սատանան է, որ երբեմն օձի, վիշապի կերպարանքով է երևում, որպէս զի կարողանայ օձապաշտութիւնը հաստատել աշխարհումս շնորհալէս զոր շահապետ վայրաց կոչեն, ոչ մերթ մարդ երևէր և մերթ օձ, որով և զօձապաշտութիւնն հնարեցաւ յաշխարհ մուծանել: Եզնիկը շատ է աշխատում վիշապ և օձ գաղափարները նոյնացնել տեսլով՝ «Եւ այլ ինչ ոչ են վիշապը՝ բայց կամ օձը մեծամեծք ցամաքայինը կամ ձկունը աշխարիք ծովականը, զորոց ասեն, թէ լեռնաբերձք և մեծամեծք են» (էջ 104): Այն ինչ ժողովուրդը հաւատում էր, որ վիշապները դեհերի առանձին տեսակն են և առանձին կեանք, հաղուհներ և զբաղմունքներ ունեն: Նրանք, օրինակ, մարդկանց նման որսի են գնում և մարդկանց նման նրանք էլ բնակութեան պալատներ ունեն: Այս հաւատալիքը Եզնիկը հերքում է տեսլով. «Եւ ոչ որսս երբեք որպէս մարդկան արարեալ են վիշապաց կամ առնեցին և ոչ տահաբք իբրև մարդկան են նոցա ի բնակութիւնս: Նրանք շատ դիւցազուն թագաւոր մարդկանց որսացել և տարել են իրենց մօտ. «Եւ ոչ զոր ի թագաւորազգեաց և ի դիւցազանց ունեն կապեալ առ իւրեանս կենդանի» և կապած կենդանի պահում են: Օրինակ Յունաստանում առում էին թէ՛ դեհերն Աղէքսանդրին կապած պահում են իրենց մօտ կենդանի: Այսպէս այդ դև-վիշապները հայոց Արտաւազդ թագաւորին էլ շղթայել և պահում են: Նա մինչև այժմ կենդանի ապրում է նրանց մօտ. բայց մի օր պիտի դուրս գայ և տիրի աշխարհին: Ինչպէս հրէաները հաւատում էին, թէ Դաւթի սերնդից մի թագաւոր պիտի դուրս գայ և իրենց թագաւորութիւնը վերականգնի, այնպէս էլ հայերն են սպասում, թէ Արտաւազդը վիշապների ձեռքի պիտի ազատուի և զայ հայոց փառաւոր թագաւորութիւնը վերանորոգի: «Այլ որպէս զԱղէքսանդրէ խաբէին դեք՝ թէ կենդանի կայցէ, որոց ըստ Եզիպտական հնարողութեան կապեալ արկեալ կախարդանօք զդէ ի շիշ, կարծեցուցանէին, թէ Աղէքսանդրոս կենդանի իցէ և մահ խղրթիցէ... Նոյնպէս և ժողովուրդն զիւաց խաբեաց զդիւցապաշտս հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ զիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանիւոց և ունիւոց է դաշխարհ, և ի անոռի յոյս կապեալ կան անհաւատք...» (էջ 104—105): Այստեղ ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ Արտաւազդն այստեղ ժողովրդական հաւատալիքի մէջ մի փառաւոր հերոս թագաւոր է հանդէս գալիս, որը՝ եթէ դեհերից ազատուի ոչ թէ աշխարհ պիտի կործանի, ինչպէս Խորենացու մէջ է պատկերացուած, այլ ընդհակառակն նա պիտի վերականգնի Հայոց թագաւորութիւնը. այս յոյսը ժողովուրդն է կապել նրա հետ:

Այս վիշապներն երբեմն յիբրաւի օձի ձեռք են երևում, երբեմն իբրև հակա ժարդիկ։ Նրանք երբեմն օրփներ, ուղտեր առաջ ձգած գալիս են և գիւղացու կալից նրա աշխատանքը դողանում, տանում են։ Այսպէս էլ 103 տարդուս ենք. «Եւ ոչ վիշապը զտոհմականս արդեանց կրեն, և ոչ զբաստ գոյ նոցա, եթէ զարդիւնս ի կալոց ուրեք կրիցեն. և ի զուր է կանն ւանն ասել ումեք ի կալս և ոչ մոս մոս»։ Այնպէս որ այն գիւղացին, որ տեսնուս է. թէ վիշապները եկել են կալից զողանալու «կան, կանք պիտի տսէր և ոչ «մոս. մոս», որ չլինի բոլոր հացահատիկը տանեն։ Նրանք, այդ վիշապները երբեմն ընտկութիւններից հեռու, ամայի վայրերում ցանցեր են ձգում և սպտառդինուած, որսի գուրս եկած ձիաւոր մարդկանց յամս ընկնում են որսի յետեից։ «Եթէ ի զաշտս երազազանք ձգիցեն և հեծեալք իբրև զմարդիկ զհետ երկոց արշաւիցեն, կեղծիք դիւաց են և ոչ ճշմարտութիւն ինչ իրաց» (էջ 107)։

Գոյութիւն ունին մի տեսակ բարի եղևեր, որոնք չար վիշապներին քաշում, հանում, բարձրացնում են վեր, որպէս զի մարդկանց կամ անասուններին շատ վնաս չտան։ Մ. Արեղեանը իւր վերոյիշեալ աշխատութեան մէջ այս հաւատալիքում տեսնում է իրաւամբ պտուտկաւոր քամու կամ վիշապ-քամու «տողովրդական պատկերացումը»։ Այդ վիշապների հայեացքն անզամ բաւական է, որ մարդ կամ անասուն ոչնչանան. և երբ այդպիսիներէք ջրհորումն են գտնուում, մարդիկ ճրագ են վերցնում և իջնում նրանց բռնելու, որովհետեւ եթէ օձը ճրագ տեսնի, էլ մարդուն վնասել չի կարող։ «Եւս եթէ բառնայցի ի վեր ախպիսի վիշապն, ոչ եթէ եզամբք ինչ անուանելովք... զի մի շողին մարդոց կամ անասնոց մեղանչիցէ. որպէս որ բասելիկոսն կոչի ազգ ինչ օձից՝ հայելով միայն սատակէ մարդ կամ զանասուն, ուստի յորժա՝ ի ջրհորս դառնիցի ճրագ առեալ իջանեն ի ներք»։ զի հայեցեալ ընդ ճրագն ոչ մեղանչիցէ մարդոյն օձն» (էջ 107)։

Վիշապները համարձակում են մինչև իսկ մարդու մէջ մտնել և այնտեղ բնակուել։ Այն մարդը, որի մէջ մտնում է օձ-վիշապը, դիւաւոր է դառնում. և երբ նա շնում ու ճնում է, այդ իսկապէս մարդու մէջ մտած օձն է, որ ֆրշում է զայրացած։ «Եւ ոչ ի մարդ իբրև զգն մտանէ վիշապն, որպէս ոմանք իջնելով դիւաւորին կարծեցին...»։

Բայց ոչ միայն ընկնաւորութիւնը, թալանալը, ցնորելը, զառանցանքը և լուսնոտութիւնն են համարում վիշապ-գետի ներկայութեան նշանը հիւանդի մէջ, այլ և շատ սովորական և ամենօրեայ էրեւութները. օրինակ՝ աչք խաղալը, որ նոր բան կամ

բարեկամի տեսնելու նշան է համարուած, մարմնի անդամների միտ խաղալը, որ նշան է կամ ձի նստելուն, կամ նոր շոր հագնելուն, բարեկամի պատահելուն կամ ձեռն ուտելուն. ոտքի կամ ձեռքի ծակելը, քորուելը, որը ազդանշան է ճանապարհ գնալուն, կամ անձըն գալուն, կամ փող ստանալուն կամ տալուն Նոյնպէս վիշապ-դևի ազդեցութեանն են վերագրուած փնջացնելը, լեզուի կծելը, ականջի կանչելը, կոկորդի մէջ ծակոց զգալը, յորանջելը, ձիգ ու պարզ լինելը, յողոց հանելը, որք նշան է, թէ մէկն իրեն յիշուած է, արեփալը ևն, ևն. (Տես 175—178 էջ)։

Այս բոլորից յետոյ բնական է, որ երազն էլ ոգիների գործը համարուի։ Երազում զեր կնոջ կերպարանքով՝ Երևում է աղամարդուն և աղամարդու կերպարանքով կնոջը և նրանց յանցանքի, երազխարութեան պատճառ դառնում։ Դեր կարող է իգական և արական լինել և համապատասխան սեռական անդամներ ունենալ. կնոջ կամ աղամարդուն երազում երևալ, նրանց սեռական անդամները զրդուել և յարաբերութիւն ունենալ նրանց հետ։ Երբեմն այնպէս է թւում, թէ զեր փայտից կամ սրից վախնում է, բայց նա ամենից շատ Տիրոջ անունից է սարսափում է, բաւական է Տիրոջ անունը տալ, և նա կը քստմնի (Տես էջ 173—175)։

Աստղագիտութիւն եւ նակատագրի հաւատ.— Հայ ժողովրդի տիեզերագրական սովորական հասկացութիւնն ախարհի մասին շատ պարզ է, Տիեզերքը նրա համար մի տուն է, որի առաստաղից կախուած են երկու ջահ. մեծ ջահն արեւն է, փոքրը՝ լուսինը. այնուհետեւ կան էլի անթիւ փոքր լոյսեր՝ դարգարանքի համար հաստատուած առաստաղին։ Բայց այս գիտութիւնը ժողովրդի հաւատին, երևակայութեանը բաւարարութիւն չի տալիս, և նա որ իւր երևակայութեամբ շնչաւորել է լիւնները, դաշտերը, ծովերը և մինչև անգամ իր տան, ջրհորի բոլոր անկիւնները, պիտի շնչաւորէր նաև արեւն ու լուսինն ու բոլոր աստղերը։

Եզնիկի մէջ, ուր զրադաշտական կրօնի մասին է խօսքը, արեւն ու լուսին ներկայանում են իրրև կենդանի էակներ. Պարսկական առասպելի համաձայն՝ Որմիզդը նախ բեղմնաւորել է իւր մօրը և ծնել է արեւին, ապա քրոջը, և ծնել է լուսնին։ Մի այլ առասպելի համաձայն Որմիզդ և Արհմե ճաշի են նստած լինում, մինչ նրանց որդիները նրանց առաջ մենամարտում են։ Այդ ժամանակը նրանց մէջ կռիւ է առաջ գալիս. որդիների կռուին հայրերն էլ են խառնուած. վերջը որոշում են իրենց վէճը յանձնել մի դատաւորի. բայց որովհետեւ դեռ ոչ ոք չէր ստեղծուած, այդ պատճառով նրանք միացեալ ուժով ստեղծում են արեւին, որ լիւն իրենց դատաւորը (էջ 141)։ Եզնիկը կարծում է, որ իգասէր

պարսիկները միայն կարող են այսպիսի առասպելներ ստեղծել. բայց արդենք այս առասպելները նաև Հայաստանում տարածուած չէին: Յայտնի է, որ հեթանոս հայերը լուսինն ու արևը՝ իրրև անձնաւորեալ էակների՝ աստուածների՝ պաշտել են: Նոյն իսկ մեր ժամանակում ժողովրդական հաւատալիքի մէջ արևն ու լուսինը հանգէս են գալիս իրրև քոյր ու եղբայր: Արևը մեծ քոյրն է, իսկ լուսինը փոքր եղբայրը: Եղնիկի մի հատուածից երևում է, որ Ե. դարի հայերը լուսինն էլ էզ կենդանակերպ էին համարում, որովհետև լուսնի ժամանակ առ ժամանակ կարմիր արնագոյն կերպարանք ստանալուց հետևեցում էին, թէ նա մի էզ դև-վիշապ է. և կախարհները կարող էին հմայութեամբ լուսինն իջեցնել մի կալի մէջ և կաթնասու անասունի նման կթել: Ուրախ կախարդաց տեսեալ... ղլուսնոյն արիւնագոյն լինելոյ զկերպարանս, զեի նմանել լուսնի բարբառջեն... Թէ ի կալ մի փոքրիկ ամփոփիցի և կթիցի անստինս:

Եամենայն դէպս հաւատալիքի մէջ լուսինն ու արևը մի մօր գաւակներ են ներկայանում: Բայց ձվ է եղել նրանց մայրը. հայ հեթանոսական կրօնից յայտնի չէ. կարող է պատահել, որ հեթանոս հայերն էլ պարսիկների նման բոլոր աստուածների և աստուածուհիների ծնողը ըսխտն կամ Ժամանակը համարէին: Թեբեա այս կերպով բացատրուի այն՝ որ ժողովրդական հաւատալիքով մարդկանց բախտը և ճակատագիրը կապուած և կախուած է համարում երկնային լուսաւորներից: Ե. դարի հայ ժողովրդի այս աստղագիրութեան և ճակատագրի հաւատալիքի դէմ է կուռւմ Եղնիկը՝ զրելով Վիւք ոչ երբէք զմարդիկ ի կապաշտութիւն յօժարեցուցանէին... ոչ ի ըաշխս բախտից և ոչ ի ճակատագրաց և ոչ ի կապելոց հրամանաց, ոչ ընդ աստղս պշուցանել, թէ նորա ինչ իցեն պատճառք բախտաւորութեան և չուառութեան (էջ 150): Աստղերը կենդանի, միայուն էակներ են. մարդկանց ծնունդն ու մահը, բախտն ու անբախտութիւնը նրանք են սահմանում. ինչպէս որ որոշում են, այնպէս էլ կատարում է. չի կարող ծնունդը նրանց սահմանածից առաջ կամ յետ ընկնել և կամ մահը այլ կերպ լինել կամ ուշանալ: Այսպէս վկայում է Եղնիկը Ջմենդոց պատճառս և զմաւումնց յաստեղաց իրրև ի կենդանեաց դնեն. որպէս թէ յորժամ ծնանիցեն, անդէն և մահուանքն իւրաքանչիւր ուրուք անվրէպ սահմանիցեն. և ըստ այնմ ոչ յառաջել ումեք մեռանել հնար իցէ և ոչ յամենալոս (154 էջ) և կամ՝ ԵՆԷ Քւր իցէ այն, զոր ասենն, և թէ որ ինչ ի ճակատագրին գրեալ է հրամանացն, այնմ չէ հնար վրիպել. այլ որ փառաւորն զրեցաւ՝ փառաւոր է, և որ չուառն չուառ. և ուր հրամանքն իցեն և յումմէ

հրամանքն ըստ այնմ և մեռանին. և վրիպել չէ հնար ի սահմանելոյ հրամանէնս (էջ 161):

Նայած զոր աստղը, զոր աստեղատունն է հանդիպում, նոյն ժամանակում ծնուածները համապատասխան բախտ են ունենում. Եթէ Առիւծը լինի աստեղատունում, ով որ ծնուի, թագաւոր երգառնայ, ի. և եթէ Եղն լինի՝ ծնուողը հզօր և բարեբաստիկ կը լինի. իսկ եթէ Խոյը լինի՝ ծնուողը մեծատուն կը դառնայ, իսկ եթէ կարիճ լինի, այն ժամանակ ծնուողը չար և մեղաւոր կը լինի. իսկ եթէ Կոռնոսն աստեղատուն մանի՝ թագաւոր պիտի մեռնի: Ահա գլխաւորապէս սրանք և էլի ուրիշ կենդանակերպները՝ աստղերը որոշում են մարդկանց բոլորի բախտը. եւ այդ է հաստատում Եղնիկը հետեւեալ տողերով. «Դարձեալ բախտաւորութեանց և չուսողութեանց զաստեղս դնեն պատճառս, որպէս թէ աստեղատունք ինչ իցեն և ըստ դիպելոյ աստեղաց յաստեղատունս՝ նոյնպիսիք և ծնունդն լինիցին: Մինչդեռ առիւծն, ասնն, յաստեղատանն իցէ՝ և ծնանիցի որ, թագաւոր լինելոց է. և մինչդեռ եղն է՝ և ծնանիցի որ, հզօր և բարենշան զաւոց է. մինչդեռ Խոյն է՝ և ծնանիցի որ, մեծատուն լինելոց, և որպէս նայն թաւ և ասունդ է, և յորժամ կարիճն է և ծնանիցի որ, չար և մեղանշական լինելոց է...: Որպէս թէ յորժամ Կոռնոսն յաստեղատունն մտանիցէ, թագաւոր մեռանի...: Էջ 155—156. Այս՝ հաւատալիքի դէմ պայքարում է Եղնիկը, բայց նա էլ ընդունում է ժողովրդի հետ, թէ աստղերից և աստեղակերպներից է կախուած ցուրտն ու տաքը: Որ լուսինն առհասարակ երկրի խոնաւութեան պատճառ է և ինքն էլ խոնաւ է, դա այն ժամանակուայ ժողովրդական աշխարհայեացքի և գիտութեան մէջ ընդունուած էր. դառ համար լուսինը խոնաւական է կոչում, Բայց արեւն էլ է խոնաւ համարւում, որովհետեւ ծովից է դուրս գալիս և փազելու ժամանակ ցօղ է թողնում աշխարհի վրայ: Նա ազլիկ-արեւ երեկոյեան գնում է հանգչում իւր մօր ծոցը, ատուտեան կողմը ծովի մէջ լողանում, մաքրւում, ապա դուրս է գալիս իւր շրջանն անելու:

Ժողովրդական բժշկութիւն.— Մի բիշ էլ ժողովրդական բժշկութեան վերաբերեալ նիւթեր ենք գտնում, որոնք կրում են հատուկոտոր և պատահական բնոյթ:

Եղնիկն իւր Ա. գլխում ի միջի այլոց ուզում է ապացուցանել, որ աշխարհումս ի բնէ չար ոչինչ չկայ. որ ամենաչար բանն էլ կարող է օգտակար լինել: Օրինակ. օձից աւելի չար գազան չկայ, բայց բժիշկները կարող են նրանից թերիակէ-դեղթափ պատրաստել, որը թոյների սպանիչ է և դեռ տեղը չհասած՝ իսկոյն բուժում է: «Ձինչ չար՝ քան զօձն կայց է ի նմանէ թիրիակէ, և ի սպանող դեղոցն,

որք ի նենգութենէ մարդկան կազմեցան, չև հասուցեալ և անդէն բուժէս (էջ 63):

Եստ շար կենդանիների մորթին մեծ բարիք է մեզ համար, իսկ նրանցից մի քանիսի նրազուից դեղեր կարելի է պատրաստել: Երբեմն էլ ընդհանրապէս օգտակար կենդանիները կարող են մեզ ֆուսել: Օրինակ ցլու միսն ուտելն առողջարար է. այն ինչ տրիւնը թոյն է. խմողը կը մեռնի: Նոյն բանը կարելի է նկատել բոյսերի մէջ: Մահազարոնը, եթէ մէկը առանձին, ւտի, սպանիչ է. խառնելով ուրիշ արմատներ չես՝ քնահաւանների քունն է բերում. կամ հազարը, եթէ մէկը տաք ժամանակ ուտի, կը զոյաւայ, նա փորի շերմը կը փարատի, եթէ հով ժամանակ ուտեն, կը ֆուստի. իսկ եթէ նրա ջուրը քամած, զտած մէկը խմի, կը մեռնի. ապա եթէ մէկը նրա սերմը աղայ և խմի, սեռական ոյժից կ'ընկնի: Այսպէս էլ կանեփուկ թուփի սերմը գեղ է և կիրքը սանձահարելու ոյժ ունի. իսկ մոլեխիւղն առանձին վերցրած կարող է մահացնել, բայց բժիշկները կարող են նրա շնորհիւ հնացած մաղձը ոչնչացնել: Կազանչանան կոչուած բոյսը առանձին զործածուած, մահաբեր թոյն է, ուրիշ դեղերի չես խառնելու դէպքում մաղձի դէմ շատ լաւ ներգործութիւն է ունենում: (Տես 66—67):

Անշուշտ ժողովրդական բժշկութեան մի տեսակն է նաև կախարչների կախարդական միջոցներով առաջ բերած բժշկութիւնը: Նրանք փորձում էին կախարդական հնարքներով հիւանդի մէջ մտած դէին, չար ոգուն կապել, կամ գուրս հանել, որի ժամանակ հիւանդին շատ էին չարչարում. գծրախտաբար Եզնիկի մէջ միայն մութ ակնարկներ կան այդ մասին (Տես էջ 85):

